

Ի. Կոլեսնիկով
Յեղ
Շ. Զուդնովսկի

ԶՈԿԻ ԿՐԻՎԸ ՏԱՆԿԵՐԻ ԴԵՄ

ՀՀՀ
4-64

ՊԵՏՐԱՍ
1 9 3 5

Ի. ԿՈՂԵՍՆԻԿՈՎ, ՅԵՎ. Ճ. ԶՈՒԳՆՈՎԱԿԻ

358

Կ-64 Մ

ԶՈԿԻ ԿՈՒՎԵ
ՏԱՆԿԵՐԻ ԴԵՄ

ՊԵՏՀԱՆԱԿ
1 9 3 5

Ա. Կոլեսնիկով յեկ Շ. Զաւդովսկի—«Զովկ» կովկը տանգերի զեմք: Հեղինակները կենդանի և մատչելի լեզվով պատմում են, թե ինչպիսի տանկեր են լինում, ինչով են նրանք ուժեղ, և նրանք ինչ թույլ կողմեր ունեն, նույնպես և ինչով կարող են զոկը կովկ մղել տանկերի զեմք պաշտպանության ժամանակը յերթում և հարձակման ժամանակը: Աղխատության զերջում հեղինակները մարդկին հուշատերեր են տալիս հետեւալ խնդիրների վերաբերյալ. հակառակորդի տանկերի զեմք կովկ համար և մեր տանկերի հետ մրացնական գործողություններ կատարելու գեղքերի համար Գրքույկը նախատեսված և կարմիք բանակայինի համար, բայց նա կարող է վորպես ողտակար ձեռնարկ ժառայել նաև կրտսեր պետկազմի համար:

Տես. Խմբագիր Գ. Զ Ե Ն Յ ա ն
Թարգմ. Պ. Ա թ ա յ ա ն
Սրբագրիչ Ա. Ք ա լ մ շ ա ն



1038

37

Հրատար. 3204, Գլավիլիտ 61, Պատվեր 39, Տիբաժն 2000


Պետհրատի տպարան, Երևան, Խ Գոռունը 2

Տ Ա Ն Կ Ե Բ

Տանկը վստահելի զրահապատ մեքենա յե, վոր սպառագինված ե թնդանոթներով ու գնդացիրներով, իսկ լեռքնեմն ել թե մեկով և թե մյուտով միատեղ, և ընդունակ շարժվել առանց ճանապարհների: Տանկի պողպատե զրահի հաստությունն ե՝ 5-ից մինչև 55 մմ (միլիմետր) — զրահը չի ծակվում վոչ միայն սովորական գնդակով, այլ և արկի մանր բեկորներով:

Տանկերն ահեղ զենք են, վոր նախատեսված ե գլխավորագես հարձակողական մարտի համար: Նրանք ճանապարհն են հարթում հարձակվող հետեւակի համար և նրան ոգնում են հաջողության հասնել փոքրագույն կորուսաներով: Դրանք համարյա թե ամենագնաց մեքենաներ են, վոր ոժաված են, բայցի դրանից, մեծ հարվածային ուժով և կրակի հզորությամբ: Նրանք հեշտությամբ հաղթահարում են մինչև 5 մ (մետր) լայնության առուները, կուտում են 60 — 80 սմ (սանտիմետր) տրամագիծ ունեցող առանձին ծառերը, քանիում են մինչև 40 սմ հաստության քարե պատերը, բարձրանում են մինչև 45° (աստիճան) ուղղություն ունեցող սարերը (նկար 1), ավերում են լարափակոցները, վոչնչացնում են հակառակորդի գնդացրալին բներն ու կրակալին կետերը, հաղթահարում են ամենաբազմազան խոչնդուները: Այդ մարտական հզոր միջոց ե, վոր մշտապես պատրաստե մարտ մղելու համար:

Տանկերն առաջին անգամ հանդես յեկան համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ. սկզբում՝ Փրանսիացիների և անգլիացիների մոտ, իսկ հետո, նաև գերմանացիների մոտ։ Նրանք մասնակցել են մեզ մոտ նաև քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ Լենինգրադի մոտ և հարավում, Կախովկայի մոտ սպիտակների կողմին, բայց շատ անհաջող են գործել՝ կամ վոչնչացվել են կարմիր հրետանու կրակով, կամ գերի յեն վերցվել։




Նկար 1. 45°-ից ավելի ուղղորդություն ունեցող լանջերը տանկերի համար անանցանելի յեն։

Պատերազմի ժամանակ՝ տանկերի հայտաբերված ուժեղ և թույլ կողմերն ուսումնասիրվել են և ներկայումս տանկն արագորեն կատարելագործվում ու փոփոխվում են կառուցվածքով. մեծանում են նրա արագությունը և զրահի դիմացը լիությունը, ուժեղանում են կրակի հզորությունը։ Այժմ տարբերում են 4 տիպի տանկեր. տանկերի, թերեւ, միջակ յեվ ծանր տանկ։

Տանկերի—փոքր, շարժունակ մեքենա յէ, նախատեսված ե գլխավորապես հետախուզության համար։ Այդ՝ իր


ելությամբ փոքր տանկ ե, վորի սպասարկու խումբը 2 մարդուց ե բաղկացած։ Տանկետկայի զրահը մինչև 8 մմ և հասնում, վորը լիովին պաշտպանում է մեքենան հրացանա-գնդացըրային կրակից, սովորական գնդակներով։ Տան-կետկան ինքը կարող է սպառագինված լինել սովորական տրամաչափի գնդացըրով մեծակալիքը գնդացըրով և փոքրա-կալիքը թնդանոթով։ Տանկետկայի վառելանյութի պաշարն ե — 38լ (լիտր), գործողության շառավիղն ե — 160 կմ (կիլոմետր), քաշը — մինչև 2 տ (տոնն), շարժման արա-գությունը — մինչև 50 կմ՝ մեկ ժամում։



Նկար 2. Կարդեն-Լոոյդ գնդացըրային տանկետկա (յերկտեղանի)։

Սրտասահմանում թերեւ տանկի տիպար և ծառայում միկկերսի 6 տոննանոց տանկը, վոր սպառագինված ե 2 առանձին աշտարակներում գրած գնդացիրներով։ Տանկի վրա կարելի յեն նույնպես դնել՝ մեկ 47 մմ-ոց թնդանոթ ու գնդացիր։ Սպասարկու խումբը 3 մարդուց ե բաղկացած։ Տանկը կարող ե 6 հազար հատ փամփուշտի պաշար վերցնել. զրահ ունի աշտարակի և կողերի վրա — 13 մմ, կարի վրա և հատակի տակ — 5 մմ և հաղթահարում ե մինչև 45° առղղորդություն ունեցող վերելքները։ Նրա մատորի

հզորությունն ե՝ 81 ձ. ու. (ձիու ուժ). շարժման արագությունն ե՝ 35 կմ մեկ ժամում։ Վիկվերսի տանկը կարող է վերցնել մինչև 150 լ վառելանյութ՝ 330 կմ համար. մինչդեռ, հին սիստեմերի տանկերում վառելիքի պաշարը բավարարում ե՝ 100-ից մի քիչ ավել կիլոմետր։




Նկար 3. Տանկատական զարասում։

Միջակ տանկի տիպարն է Վիկվերսի 16 տոննանոց տանկը (Նկար 4), վոր ընդունված է անգլիական բանակի սպառազինման մեջ։ Նա սպառազինված է մեկ 47 մմ-ոց թնդանոթով և 5 գնդացրով, վոր տեղափորված են պատվող աշտարակներում, 20 մմ հաստությամբ զրահ ունի շարժանարագությունն ե՝ 50 կմ մեկ ժամում։ Կարող է 410 լ վառելիք վերցնել։

Ծանր տանկերն այլ կերպ կոչվում են ճեղքման տանկեր։ Անգլիացիների մոտ ալդպիսի տանկ է հանդիսանում՝ Վիկվերսի ծանր տանկը, ֆրանսիացիների մոտ, վորոնք տանկեր են մատակարարում նաև մեր հարեան կապիտալիստական պետություններին՝ լեհաստանին և Ռումինիային, — «ՀՀ» տանկը։ Ծանր տանկի զրահի հաստությունը հասում է 55 մմ, քաշը — 74 ս, սպառազինությունն ե —

մեկ 155 մմ-ոց թնդանոթ, մեկ 75 մմ-ոց թնդանոթ և 4 գնդացիր։ Նրա ամենամեծ արագությունն ե՝ 12—20 կմ մեկ ժամում։ Տանկը կարող է կոտրել, գցել, առանձին ծառերը մինչև 80 սմ հաստությամբ, վառելիքի պաշարը




Նկար 4. «Վիկվերսի» միջակ տանկը։

միջին հաշվով նախատեսված է 10 ժամի համար։ Սակայն, պետք է ասել, վոր բուրժուազիան իր տանկերի մասին տվյալներն աշխատում ե խիստ գաղտնի պահել, ուստի այստեղ զետեղված տվյալների մեծ մասը կարելի յէ միայն մոտավոր համարել։

Տանկերի շարժունակությունը և ինքնուրուցին գործողություններ կատարելու, նրանց ընդունակությունը պահանջեցին, վոր նրանք կարողանան քողարկվել սեփական միջոցներով, քիմիական կոմի մղեն և ոդալին հարձակումը յետ մղեն։ Այդ պատճառով ել, վերջին ժամանակներս մի քանի կապիտալիստական բանակների սպառազինման մեջ հանդես են յեկել «ծխատու տանկերը», վորոնք նախատեսված են՝ քողարկման նպատակներով, թանձր ծխածածկություն ստեղծելու համար։ Բացի արդ, խոշորագույն կապիտալիստական յերկրներում, ուժեղ աշխատանք է տար-

վում տանկերն ոգտագործելու վայրը՝ թևով վարակելու համար, և հիմա տանկերն արդեն կարող են իրենց հետ թե վորոշ, ճիշտ ե, դեռ ևս փոքր պաշար վերցնել։ Մինչև 1,000 մ բարձրությունների վրա թուշող ինքնաթիռների դեմ կորի մղելու համար, ոգտվում են այսպես կոչված հետքարող գնդակներով, այսինքն այնպիսի գնդակներով, վորոնք թռիչքի ժամանակ՝ ծխի հետք են թողնում։ Ժամանակակից տանկերի վորոշ տիպերը, հասուկ դենիթային գնդացիրներ ու հրանոթներ ունեն։



Նկար 5. «Վակակերուի» ժամը տանկը։

Տանկերի քանակն անընդհատ աճում է, միաժամանակ ուժեղանում են նրանց մարտական հատկությունները։ Չարժունությունը, ամենազնացությունը ինչպես պաշտպանական, այնպես ել հարձակողական սպառազինությունը և ուժը։ Գերմանացիներն արդեն համաշխարհային իմպերիալիստական պատերազմի վերջին՝ 2 տանկ ելին կառուցել, վորոնցից լուրաքանչյուրը 150 ս քաշ ուներ։ Պատերազմը վերջանալու պատճառվ, նրանց հարկ չեղագալ տանկերը գործադրել՝ մարտադաշտում, բայց պատե-

րազմից հետո, կապիտալիստական լերկրներում, չեն դադարում մտածել հատկապես մեծ և նզոր տանկեր ստեղծելու մասին։

Ֆրանսիայում, քիչ առաջ, ուագմական մինիստրությանը 600 տոննանոց (37,500 քութ) տանկի նախակիծ ե ներկայացվել։ Գոյություն ունի 7.000 ս քաշ ունեցող իտալական գերտանկի նախագիծը, վորն իբրև թե պետք ե ունենա զանազան տրամաչափի 19 թնդանոթ և անցնի ջրային արգելքները մինչև 15 մ խորությամբ, պետք ե ունենա մինչև 20 կմ մեկ ժամում արագություն և ամուր զրահ, վորը բավական պիտի լինի նրան պաշտպանելու միջակ տրամաչափերի՝ դաշտային թնդանոթների արկերից։

Սուայժմ այդպիսի գերտանկերը գոյություն ունեն միայն նախագծերում, կամ վորպես փորձնական տիպարներ։ Սակայն պետք ե հիշել, վոր այդպիսի տիպի մեքենաներ ստեղծելը, վորոնցից լուրաքանչյուրը կարողանա, վորքան հնարավոր ե շատ մարտիկներ փոխարինել — չափազանց կարևոր խնդիր ե՝ կապիտալիստական լերկրների համար, վորտեղ մարդկային մատերիալը — մարտիկները չափազանց անվտանելի լին։ Բայց դրանից անկախ, թե ինչ ուժ կունենան բուրժուազիալի նոր գերճղոր տանկերը և առնասարակ հանդես կդան արգով այնպիսի տանկեր ապագա պատերազմում, վոր մեզ կփաթաթեն կապիտալիստաները, կարմիր բանակին հարկ կլինի գործ ունենալ թշնամու մեծ քանակությամբ տանկերի հետ և նրանց գեմ գուրս բերել իր սեփական զենքը, նրանց թվում իր սեփական՝ խորհրդային տանկերը։ Այդ պահանջում ե կարմիր մարտիկից վոչ միայն կարողանալ կորի մղել հակառակորդի տանկերի դեմ, այլ և գործել իր այն տանկերի հետ միատեղ, վորոնք հարվածներ պիտի հասցնեն հակառակորդին և ճանապարհ պիտի հարթեն մեր հետևակի հա-

մար: Այս գըքուկում մենք կիսուենք միայն այն մասին թե՝ ինչպես կոխվ մղել հակառակորդի տանկերի դեմ՝ ջոկի ուժերով, իսկ այն մասին, թե ինչպես գործել տանկերի հետ՝ միատեղ, ընթերցողը կիմանա մէուս գըքերից:

ՏԱՆԿԵՐԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Տանկերի դեմ հաջողությամբ կովելու համար, պետք են մանալ նրանց տեխնիկական ու տակտիկական հատկությունները նրանց ուժեղ և թույլ կողմերը: Տանկերի ուժեղ կողմերի մասին, մենք արդեն ասել ենք գրքի սկզբում. դրանք հետևալներն են. շարժունակությունը, ամենագնացությունը, կրակի և հարվածի ուժը, ամուր զրահը և մարտի համար մշտավես պատրաստ լինելը: Իսկ վորոնք են տանկերի թույլ կողմերը:

Ամենից առաջ շատ սահմանափակված են տանկերից տեղի ունեցող դիտողությունը: Վարորդն ու հրածիգը տանկից դիտում են մարտադաշտը նեղ դիտածեղքերի միջով: Այդ դիտածեղքերը տանկի ընթացքի ժամանակ, «ցատկուում են» աշքերի առաջ: Նույնիսկ պերիսկոպների (շրջադիտակ) կիրառումը (իտալական ծանր տանկ) կամ ուղտիկական նշանոցների (թեթև տանկ) կիրառումը քիչ են փոխում դրությունը: Այսպիսով, մարտի տաք ժամանակ, գրեթե անհնարին է լինում տարբերել առանձին մանր տարկաները: Ճիշտ ե, տանկը հովանարման համար մի քանի բացվածքներ ունի, վոր կարելի յե բանալ, բայց մարտում դրանք պետք ե փակած լինեն: Այսպիսով, տանկից դիտողության հնարավորությունը, մարտի ժամանակ, խիստ սահմանափակված ե:

Չնայած այն հանգամանքին, վոր դիտածեղքերը շատ նեղ են, նրանք մշտական վտանգ են ներկայացնում, տան-

կերի սպասարկու խմբի համար: Այդ ճեղքերի միջով շահանակների բեկարներ ու գնդակների հալված արնին ե դիպչում:

Այդ թերությունը վերացնելու և դիտողության պահանջները բարելավելու համար, ժամանակակից տանկերն ոժտված են գնդակից չծակվող ապակով (արիպլեքս) կամ ստրոբոսկոպով:

Ստրոբոսկոպը – նեղ, ուղղաձիգ ճեղքեր ունեցող, արագ պտտվող, զրահապատ գլան ե, վոր տեղավորվում ե տանկի հրամատարի աշքերի առաջ: Գործիքն արագ պտտելու ժամանակ, դիտողի աշքը գրեթե չի նկատում գլանի ճեղքերի միջև լեզած պատերը, ճեղքերը նրա առաջ միանում, մի ընդհանուր բացվածք են կազմում, վորի միջով կարելի յե տեսնել շրջապատ վայրը: Բայց ստրոբոսկոպը նախըլոր տանկերում ել չի լինում, և լերկորդ՝ այդ շատ զգայուն գործիք ե, վոր հաճախ հրաժարվում ե աշխատելուց:

Ժամանակակից տանկը խոլ ե, վորովհետև մոտորի վոռնոցը խլացնում ե բոլոր մնացած ձախները, տանկի մեջ գտնվողների համար: Զրահը նույնպես շառաչում ե, բացի այդ անընդհատ դղրդում են թթվուրները: Այսպիսով, տանկի մեջ հնարավոր չե վոչ միայն վորեւ խոսակցություն ունենալ, այլև արկի պալթյունը նույնիսկ լսելի լինում միայն՝ ամենամոտիկ տարածության վրա: Այդ խլությունը, իհարկե, հակառակորդի տանկի ոգտին ե գնում:

Շարժվող տանկից կրակելը շատ դժվար ե, մանականդ այն ժամանակ, լերբ նա շարժվում ե փորփորած կտրտուկ վայրով: Տանկից հրաձգություն կատարելը մեծ հմտություն ե պահանջում և այդ հրաձգությունը գործոն ե միայն փոքր հեռակարգությունների վրա (600 մ և ավելի մոտիկ): Ինքնին հասկանալի լե, վոր տանկից կատարած հրաձգության ձշտությունը շատ ավելի փոքր ե, քան-

անշարժ հրանոթների և գնդացիրների կրակի ճշտությունը՝ բայց պետք ե նկատի ունենալ, վոր տանկերի կրակի գործունեությունը կարելի է բարձրացնել տանկերի սպասարկու խմբերի՝ խնամքով պատրաստության միջոցով, և այն ժամանակ, հրածգությունը կարող է բավականին ճիշտ լնել:

Պետք ե մատնանշել, վոր տանկերի մանկովային հնարավորությունը նույնպես սահմանափակված է: Տանկը չի կարող անցնել արնպիսի փոսի վրայից, վորի լայնությունն ավելի է տանկի լերկարության կեսից, չի կարող շատ ուղղորդ լանջը բարձրանալ, վորը տանկին մատչելի վորոշ սահմանից ավելի ուղղորդ է, չի կարող անտառը հաղթահարել, լեթե ծառերը մեկը մըուսից տանկի լայնությունից ավելի մոտիկ են կանգնած. չի կարող անցնել այնպիսի անտառով, վորի ծառերը կուտակ են բնուում՝ մեկը մըուսից շատ մոտիկ. վերջապես չի կարող գետն անցնել, լեթե գետի ափերն ու հատակը ձահճուտ են, և գետը բավականին խոր է: Ճիշտ է, վերջին ժամանակներս սաեղծել են տանկ-ամֆիբիա, վորը լողում է ջրի վրա, բայց համենայն դեպս, տանկի համար հենց գետն անցնելը, կապված է մեծ զժվարությունների հետ:

Տանկի շուրջը, միշտ վորոշ, անհարվածելի (մեռալ) տարածություն ե լինում—ալդ մասին մարտիկը պետք ե լավ հիշի, վորովինետև մարտիկն այստեղ տանկի գնդացիրների կրակից անվտանգ ե մնում:

Տանկերի մոտի անհարվածելի տարածությունը միաւուսակ չե, — տանկերի վորոշ տիպարներն անհարվածելի տարածությունն ունենում են քթի տակ՝ 2-ից մինչև 4 մետր, կողքերին՝ 6-ից մինչև 8 մ, պոչին՝ ել ավելի: Առանց նշանոցի, հրածգություն կատարելու ժամանակ անհարվածելի տարածությունը փոքրանում է:

Յեզ վերջապես ևս մի հանդամանք կա. տանկի մեջ

աշխատելը շատ դժվար է: Մեքենայի նեղ մարմինը տանիքի խմբից պահանջում է՝ մեծ մարզվածություն, պարզություն, քիչ և միենուլն ժամանակ արագ շարժումներ: Տանկի մեջ աշխատանքը չափազանց հոգնեցուցիչը է, և սպասարկու խումբը կարող է նրա մեջ աշխատել ընդամենը՝ մոտ 4 ժամ: Զափազանց տաքացած ողը հովացնելու և մաքուր ողով փոխարինելու համար, անհրաժեշտ ե տանկի դռները հաճախակի բանալ, իսկ այդ, մարտական պարագայում՝ գրեթե անհնարին է:

ՏԱՆԿԱՅԻՆ ԽՈՉՆԴՈՑՆԵՐ. ԱՎԻԱՅԻԱՆ, ՏԱՆԿԵՐԸ, ԹՆ ՅԵՎ. ՀՐԵՏԱՆԻՆ ՏԱՆԿԵՐԻ ԴԵՄ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ


Տանկերի դեմ կռվելու միջոցները շատ բազմաթիվ են: Նրանք բաժանվում են ակտիվ և պասսիվ միջոցների:

Կռվելու պասսիվ միջոցներն են՝ սարերը, խորը ջրային ալգելքներն ու ձահճները, անտառները, հրետանաէին արկերով խիստ փորփորած վայրը, և արհեստական արգելքները:

Հակառակորդի տանկերի դեմ ակտիվ կռիվ են մղում՝ մեր տանկերը ավելացիան, հեռավոր և մոտիկ մարտ մղող հրետանին, մեծակալիբը գնդացիրները, հակառանկալին հրացանները, սովորական հրացաններն ու գնդացիրները, թեթև ականանետները, ձեռքի նոնակները, թն և թունավոր ծխերը:

Այսպիսով, տանկերի դեմ պայքար մղելուն ամենից առաջ ոգնում ե վայրն՝ ինքը: Ամեն մի զորամաս, պաշտպանության անցնելիս, պետք ե հաշվի առնի այն բոլոր արգելքները, վոր կտրում են տանկերի ձանապարհը և վորոնք գորություն ունին պաշտպանողական շերտի առջեկ՝ լեզրի առջևում և պաշտպանության խորքում: Տանկերի համար


անանցանելի արգելքներ են հանդիսանում՝ հեղեղատները, առուները, խրամատները և փոսերը 2 մետրից (թեթև տանկերի համար) և մինչև 5 մետր (ծանր տանկերի համար) լայնությամբ, այն հեղեղատները, վորոնց պատերի ուղղորդությունը 45° -ից ավելի լեռ, մեծ, խիստ անտառները, 70 սմ-ից ավելի հաստ կոճղերը, այն գետալին արգելքներն ու ճահճոտ վալրերը, վորոնց լայնությունը 3 մետրից և խորությունը 1 մետրից ավելի լեռ։



Նկար 6. Ծանկալին փոսեր

Այն տեղերում, վորտեղ բնական արգելքներ չկան, և առանձին ավելի ճիշտ կարող են անցնել, արհեստական փակոցներ են կառուցվում։ Այդ փակոցները կառուցում են՝ միայն սապրոքները, այլև հետեւակը, նրա լուրաքանչյուր ստորաբաժանումը։ Այդ փակոցներին պատկա-

նում են՝ փոսերը, ծուղակները, թեքատները, ծառակուցաները, կոճղերը, արգելանտառները, բարիկադները, ճահճացումը և ականալին դաշտերը։




Նկար 7. Հակատանկալին թեքատներ

իոլություն ունեցող բոլոր հակատանկալին կառուցվածքներից ավելի ճիշտ ե ականալին դաշտ կառուցել։ Դրա համար 1 քառակուսի կիլոմետրի համար 1—3 հազարական ե պահանջվում լուրաքանչյուրը 4 կգ քաշ ունեցող։ ըստ վորում լուրաքանչյուր ականը գնելու համար պահանջվում ե ընդամենը՝ միայն 5 բոպե։ Այդպիսի ականը տանկից տեսնել գրեթե անհնարին ե։ Տանկի թրթուրի, նրան սեղմելուց ականը պայմանական դաշտ է և փշացնում։

Ականալին դաշտը շատ ուժեղ արգելք ե, բայց նա մեծ քանակությամբ ականներ ու մասնագետ-սապրոքներ ե պահանջում։ Տանկերի գեմ սովորական և յեռանկյունի փոսերը կարելի լեռ կառուցել նաև ջոկի ուժերով։ Յեռանկյունի փոսի՝ գեպի պաշտպանվողի կողմը դարձված պատը վորքան հնարավոր ե պետք ե ուղղորդ լինի։ Անընդհատ փոսերն իրենց կառուցման համար, շատ ուժ ու ժամանակ են պահանջում։ Ուստի ամենից նպատակահարմարն ե այդ փոսերը կառուցել ընդհատ կամ հատվածներով,


փոսի յերկարությամբ խոտարնակի պատերը թողնելով լունաքանչուր 4—5 մետրից հետո— 1-ից մինչև 1,5 մետր լայնությամբ (նկար 8):



Նկար 8. Հակատանկային յեռանկյուն և սովորական փոսեր:


Ոգտակար եւ փոսերը փշալարով պարուրել: Այդպիսի փոսերը կկանգնեցնեն նաև տանկերին ուղեկցող հետեակին: Փշալարն ամրացվում ե փոսի հատակի վրա՝ փոսը ձգելով այն, ցանցերի, պարանների և ալ միջոցներով:

Տանկային ծուղակները — փոսերը պետք ե խնամքով քողարկել ու ծածկել կամրջակներով, վորոնց վրա-




Նկար 9. Հակատանկային ընդհատ փոս

յով կարող են անցնել մարդիկ և սալլակներ: Ծուղակին հանդիպելիս, տանկը խորտակվում և մնում ե փոսի մեջ (նկարներ 10, 11, 12): Ծուղակի վերևը կարելի յէ քորդակել բլրակի, թփերի խմբակի ձևով և այլն:




Նկար 10. Հակատանկային ծուղակ



Նկար 11. Տանկային ծուղակի (փղի փոս) կառուցվածքը:




Ծառափակոցներ, արգելանտառներ կառուցելու ժամանակ ծառերը չպետք է կոճղերից ամբողջովին բաժանել, վորպեսզի հակառակորդի համար դրանց դես ու գեն ցրիվ տալն ավելի դժվար լինի: Ծառերը միշտ վայր են գցվում դեպի հակառակորդի կողմը:




Նկար 12. Ծառկային ծուղակ քարոզ պատճերով և կիսով չափ ծածկած:
մեջն անձրեկի ջուր և կանգնած:

Կոճղերի առանձին խմբակները նույնպես կարող են կասեցնել տանկերի շարժումը: Ուստի անտառոտ վայրերում կարելի յէ կիրառել այսպես կոչված «կոճղում»-ը: Կոճղերի բարձրությունը գետնից առնվազն $60 - 70$ սմ պիտի լինի, վորպեսզի տանկը, կոճղին հանդիպելիս, նրա մի թրթուրը կախ ընկնի ողի մեջ (նկար 15):



Նկար 13. Բարիկադներ


Բոլոր հակառակներին վակոցները, վորպես ընդհանուրը կանոն, հրետանու և գնդացիրների կրակի տակ են վերցվում: Տանկը, արգելքներից մեկին (ական, ծուղակ) հանդիպելիս, կարող է կանգ առնել ժամանակավորապես կամ բոլորովին, և այդ ժամանակ նա կգնդակոծվի հրետանալին կրակով:



Նկար 14. Ծառափակոցներ և արգելանտառներ

Յերբ տանկերը կրիվ են մղում տանկերի գեմ, հաջողությունը կլինի այն տանկերի կողմը, վորոնք ավելի

լավ զրահ ու սպառագենք ունեն և վորոնք ավելի լավ են:
ողտագործում վայրն ու պարագան:



Նկար 15. Տանկերի «կոճղում»

Տանկերի դեմ ինքնաթիւների միջոցով կրիվ մղելու
ժամանակ հետախուզական ինքնաթիւները հայտաբերում
են հակառակորդի տանկալին սյուները, պարզում են տան-
կերի քանակը, նրանց շարժման ձանապարհը և այդ մասին
հայտնում են իրենց գորամասերին, իսկ հետո ձշտում են
իրենց հրետանու կրակը:

Հետախուզ-ինքնաթիւները գործում են շատ սերտ
կապ պահպանելով ոմբակոծող ինքնաթիւների հետ: Հետա-
խուզ ինքնաթիւնը, նկատելով տանկալին շարժվող սյունը
կամ տանկերի կանդնելու տեղը, այդ մասին հայտնում է
ոմբակոծող ինքնաթիւներին: Սրանք, վրա տալով՝ տանկե-
րին, աշխատում են նրանց շարքից դուրս բերել ֆուզասալին
ոռումբերով: Այդպիսի ոռումբերն ավերում են նշանը վոչ մի-
այն ուղղակի դիպման ժամանակ, այլ և պայման ալիքի ու-
ժով: 16 կիլոգրամանոց ֆուզասալին ոռումբն ունի 20 Քառ. մ
պայման ալիքի գործողության շառավիղ 100 կգ-ոցը—

45 Քառ. մ, 500 կգ-ոցը — 112 Քառ. մ: Այդպիսով ֆու-
զասալին ոռումբով տանկը ոմբակոծելու ժամանակ պարտա-
դիր չե անպայման նրան դիպցնել, ևս առավել սավառ-
նորդի համար շատ դժվար ե այդ հաշվել, — բավական ե
մեծ տրամաչափի ոռումբ ձգել, հաշվի առնելով պայման
ալիքի շառավիղը, և տանկը կարելի յե շարքից դուրս բերել,
վորովհետեւ, պայման բացառիկ մեծ ուժի և մեծ թփով
բեկորների շնորհիվ, կարելի յե փշացնել թրթրափոր ըն-
թացքը, մեքենան շրջել, վասել մոտորն ու սպառագենքը:
Բացի այդ, հարվածը կարող ե հեշտությամբ շարքից դուրս
բերել տանկավարորդին կամ հրաձիգներին: Բացի ֆուզա-
սալին ոռումբերից կարելի յե քիմիական ոռումբեր կիրառել,
վորոնք թունավորում են տանկերի գործողության շրջանը:
Յեթե այդ նույնիսկ չփասի յել միանգամից տանկի սպա-
սարկու խմբին, այնուամենայնիվ կհարկադրի վարորդին
ու հրաձիգն հակագագերը հագնել, իսկ դրանք հագած՝ տան-
կի մեջ աշխատել շատ դժվար ե:

Տանկերի վրա գրոհ ե տալիս առնվազն ինքնաթիւ-
ների ողակ կամ մի ջոկատ, իսկ յերբեմն ել մի եսկադրի-
լիս:


Ժամանակակից ոմբակոծող ինքնաթիւները կարող
են բարձրացնել մի քանի տասնյակ ծանրակշիռ ոռումբեր:
Յեթե, որինակ՝ մի ողակ կամ եսկադրիլիս յե թուչում, վոր
զինված ե ֆուզասալին ոռումբերով, ապա, յուրաքանչյուր
2—3 վայրկանից հետո արկեր ձգելով, նրանք կարող են
հարվածել մի քանի հարյուր մետր յերկարություն և լայ-
նություն ունեցող տարածություն: Տանկետկաները,
թեթև տանկերը և զրահամեքենաները ամենից շատ վաս-
վում են ծանր ֆուզասալին ոռումբերից: Պայման ուժը,
ևս առավել ուղղակի դիպումը շարքից դուրս ե բերում

տանկը կամ վոչնչացնում ե այն: Դրա հետ միասին պետք ե նկատի ունենալ, վոր ժամանակակից ոմբակոծող ինք-նաթիռները դիպումների մեծ ճշտությամբ են ոժտված, նույնիսկ շարժվող նպատակի վրա ոռոմքեր ձգելիս: Այդ պատճառով ել տանկի ու զրահամեքենայի արագաշարժու-թյունը չի ոգնում:

Տանկի ամենաահեղ թշնամին հրետանին ե: Նկատե-լով տանկերի կուտակման տեղերը և նրանց յելակետա-մին դիրքերը, հրետանին վոչնչացնում ե տանկերը հան-կարծակի կրակացին հարձակումով:

Մեր 76 մմ-ոց թնդանոթն ունի հզոր արկ, միան-գամայն բավական արագածգություն ու դիպուկություն. 2 կմ հեռակայության վրա, ուղղակի դիպման ժամանակը նա իր արկով ջարդում ե ամեն մի տանկ:


Գնդացին հրետանին տանկերի դեմ կոփվ ե մղում, մասնաւովելով առանձին հրանոթների, բաց դիրքերից: Առանձին հրանոթի հրամատարը, տանկերի դեմ կոփվ մղելու խնդիր ստանալով, ուսումնասիրում ե այն ուղ-դությունը, վորտեղ կարող են յերեան գալ տանկերը, դիրք ե ընտրում թնդանոթի համար, չափում ե մինչև տեղական առարկաները յեղած հեռավորությունը և հրա-ձգալին քարտ ե կազմում: Այդ քարտի վրա նա գծում ե սեկտորները տանկավտանգավոր ուղղությունների վրա և այդ սեկտորների վրայի կողմնորոշների հեռավորություննե-րը, իսկ հետո մեր հետեակի կողմից գրավված տեղերը, վո-րոնցում հրաձգությունը հնարավոր ե միմիայն մեր զորքերի գլխավերելից (նկար 16):



Նկար 16. Հրանոթի հրամատարի հրաձգային քարտը

Հրանոթի հրամատարը, ի լրացումն այդ քարտի, ի-րեն համար կազմում ե տանկերի վրա կատարվող հրա-ձգության համար կանխումների ազյուտակը, յերբ նրանք հակատի լերկարությամբ շարժվելիս լինեն:

Պաշտպանության շրջանում մեծ մասամբ կառուցված կլինեն ականալին դաշտեր և ճարտարագիտական այլ փակողներ: Ուստի տանկերի վրա տեղի ունեցող կրակը մեծ մասամբ ճակատային կլինի, վորն առենից շատ ձեռնտու յէ նշանառության և հրածգության դիպուկության տեսակետից: Թնդանոթի կրակի զուգակցումը գնդացիրների կրակի հետ հարավորություն ե տալիս միաժամանակ կռիվ մղելու թե՛ տանկերի դեմ և թե, այն հետևակի դեմ, վոր շարժվում ե տանկերի յետեից: Կրակի արդպիսի զուգակցությունը մեծ հաջողությամբ ողնում ե յետ մղելու տանկերի և հետևակի գրոհը (նկար 17):




Նկ. 17. Առանձին հրանոթի և հետևակի մասը ստորաբաժանումների կողի սխեման


Հենց վոր յերեան են գալիս տանկերը, հրանոթի հրամատարը կրակ ե բացում ուղղակի նշանառությամբ առաջուց հաշված տվյալներով, վոր մացված են հրածըդարձին քարտի և աղյուսակի մեջ: Կրակն ուղղում են ամենամոտիկ մեքենաներին. Փչացնելով մեկը, կրակն անմիջապես տեղափոխում են մյուսի վրա: Հրածգությունը շարունակ 1 նոնակով ե կատարվում (առանց հապաղիչի):

Տանկերի ձեղքման դեպքում թնդանոթն անընդհատ կրակ ե վարում մինչև կիպ մոտկից կատարած հրածըդությունը ներառյալ: Յուրաքանչյուր մարտիկ, հրանոթի համրանքի յուրաքանչյուրի համար պետք ե հիշի, վոր վորքան ավելի համառ ու համարձակ ե կատարվում հրածգությունը, այնքան իր հետևակն ավելի լավ ե պատրաստվում տանկերին հանդիպելու համար:

Գնդային հրետանու առանձին հրանոթների հաջող աշխատանքը, տանկերի դեմ կռիվ մղելիս, ընդգծում է համաշխարհային խնդերի աստական պատերազմի փորձը: Բայց մեր խաղաղ ուսուցման փորձն ել վկայում ե այն մասին, վոր առանձին հրանոթները, չնայած տանկերի շարժման աճող արագությանը (տանկերի մարտական արագությունը մինչև 15 կիլոմետր ե) և, անցյալի հետ համեմատած, ավելի լավ զրահավորմանը, կարող են միանդամայն հաջող հետևանքների հասնել: 1931 թ. ջոկատային պարագամունքների ժամանակ հրանոթների շատ հրամատարներ և հրանոթային համրանքներն ամբողջովին վերցրած, իսկական հմտություն են ցուցաբերել հակառակորդի տանկերի դեմ կռիվ մղելու գործում:




Նկար 18. «Բոֆորս» 47 մմ-nyg βնդանոթ



Նկար 19. «Բոֆորս» 37 մմ-nyg βնդանոթ


Ալսպես, որինակ՝ Լենինգրադի ռազմական շրջանի ջոկատային պարապմունքների ժամանակ կապույտների տանկերը գրուզը ներխուժեցին: Կարմիր կողմի հրանոթի հրամատարը խճուղու խաչմերուկի վրայի լավ քողարկված դերքից տանկը մոտ թողեց իրեն, գրեթե մինչև կիալ մոտենալը և կարողացավ նրա վրա 4 արկ արձակել: Հակառակորդի (կապույտների) հետևակի մոտենալու ժամանակ հրանոթը լետ քաշվեց ու նոր ծածկաբան գրավեց, վորտեղից նորից շատ հաջող կրակ եր վարում հարձակվող տանկերի վրա:



Նկար 20. 20 մմ-nyg βնդանոթ

Այդ նույն ջոկատային պարապմունքների ժամանակ այսպիսի դեպքեր են լեզել:


Կապույտների տանկերը, ոժանդակելով հետևակի հարձակմանը, աննկատելի կերպով դուրս լեկան անտառի լեզրի լետեից և շարժվեցին 5-րդ վաշտի շրջանի վրա: Վաշտում ուշադրությամբ հետևում եին տանկերին, և, լեզր նրանք անցան առանձին բակի մոտից, վաշտի դասպորման խորքից թնդացին ձիգերը — մեկը, լերկու, լերեք:



Նկար 21. 47 մմ-nyg հրանոթ

Այդ հակատանկային հրանոթի հրամատարն եր, վոկակ եր վարում տանկերի վրա նախալես կազմած հրաձգային քարտի համաձայն: Դրա հետևանքով միջնորդը

շարքից դուրս բերեց լեռկու տանկ, իսկ մեկին այնու-
ամենայնիվ հաջողվեց անցնել պաշտպանության խորքը:



Նկար 22. Մական գործարանի 20 մմ-ոց թնդանոթը

ԶՈԿԸ ՏԱՆԿԻ ԴԵՄ

Մենք պատմեցինք այն մասին, թե ինչպես կարելի
է կասեցնել տանկերի շարժումն արգելվներով, ինչպես
տանկերի դեմ կռիվ են մղում ինքնաթիւները, հրետա-
նին, հրետանային առանձին հրանոթները, տանկերը:
Բայց ինչպես կարող ե տանկերի դեմ կռիվ մղել հրածը-
զային կամ գնդացրային ջոկը: Ի՞նչպիսի միջոցներ ունեն
տանկերի դեմ կռվելու համար իրենց տրամադրության
տակ հրածգային ու գնդացրային ջոկերը: Գուցե նրանք
անպաշտան են տանկերի հանդեպ:

Հրածգային և գնդացրային ջոկերն իրենց տրամադրության տակ՝ հակառակորդի տանկերի դեմ կռիվ մղելու
բավականին հզոր միջոցներ ունեն: Այդ միջոցներն են՝
հրացաների, ձեռքի ու հասոցավոր զննացիւների կրակը,
ձեռքի նուակների կապոցները յեվ բիերը: Տանկի դեմ
հրացանային նոնակների կրակը հազիվ թե փորեւ ոգուտ
բերի:

Բայց նախ քան մարտում տանկերի դեմ կռվի արդ մի-
ջոցների կիրառման մասին խոսելը, կանդ տոնենք այն

բանի վրա, թե ինչպես պետք ե դասավորվել պաշտպա-
նության ժամանակ, և յերբ, ինչ գեղքերում հրածգային
կամ գնդացրային ջոկը պետք ե կրակ վարի տանկի դեմ:
Տանկերի լետեկից, մոտավորապես 200-ից մինչև 600 մ
հեռավորության վրա գնում ե հետևակը: Վերն ե ավելի
ահեղ հրածգային և գնդացրային ջոկի համար,—հակա-
ռակորդի տանկը, թե նրա հետևակը, վոր գնում ե տան-
կի լետեկից:


Տանկը շատ սահմանափակ դիտողություն ունի. տան-
կի միջից դժվար ե դիպուկ կրակ վարել: Տանկը չի կարող
ինքնուրույն կերպով վայրն իր ձեռքում պահել, չի կարող
իրեն համար առանձին մարդկանց նեան ընտել: Նա մի-
այն ճանապարհ ե հարթում իր հետևակի համար, իսկ
հետևակը և հիանալի տեսնում ե, և հրաշալի կերպով իր
ձեռքում պահում ե վայրը, դիպուկ կրակում ե և բռնա-
մարտ ե մզում: Պաշտպանվող ջոկի համար շատ ավելի
վտանգավոր ե տանկի լետեկից ջոկը հետևակը, քան ինքը
տանկը, փորը վերջի վերջո կարելի յե թողնել մեր մոտով
անցնելու,—Զե փոր մեր կանոնագիրքն իզուր չե ուղղակի
մատնանշում, փոր յերե տանկը չի նկատել խրամատավորված
ջոկը, ապա ջոկն իրավունք չունի տանկի վրա կրակ բա-
նալու, փորվեսզի իրեն չհայտաբերի:

Քողարկումը ջոկի ամենակարևոր դենքն ե տանկի
դեմ: Բայց, քողարկվելուց հետո, պետք ե աչալուրջ հե-
տեւել այն հետևակին, վոր գալիս ե տանկի լետեկից: Այդ
հետևակի վրա յել ջոկը պետք ե հանկարծակի, ուժեղ և
կործանիչ, ավելի լավ ե՝ թևալին կրակ բանա: Այդ ժա-
մանակ ջոկի գլխավոր խնդիրն ե՝ տանկերի հետեկից հրա-
ծակող հետևակը անջատել նրա տանկերից, վորովհետեւ
տանկերն առանց հետևակի ահոելի չեն հրածգային կամ


Դնդացը ըստ ջոկի համար, յեթե նա լավ խրամատավորվի և քողարկվի, նույնիսկ այն գեպօռում, յերբ տանկերը, ջոկը հայտաբերելուց հետո, հարձակվեն նրա վրա:

Տանկից փախչել վոչ մի գեպօռում չի կարելի, — նա, միշտ յեվնույնն է, իր գիղակներով փախչողի յետքից կհասնի. իսկ յեթե տանկը նկատել է կրակային կետը յեվ նրա վրա յեւ շարժվում, պես ե տանկի դեմ վճռական կովի բրոնվել: Առ հենց այդ գեպօռումն ել տանկի վրա պետք է կրակ բանալ, տանկը 200—100 քայլի վրա մոտ թողնելով:

Բայց տանկը 5-ից մինչև 55 մմ հաստության լավ զրահ ունի: Այդ զրահը սովորական գնդակով չես ծակի: Բայց տանկը ձեղքեր ունի, վորոնց միջով նայում են վարորդը (նկար 23—24), գնդացրորդը կամ հրետավորը. յեթե նրանց շարքից դուրս բերենք, ապա տանկը կամ նույնպես դուրս կբերվի, կամ կկորցնի իր մարտունակությունը: Բայց տանկի ձեղքերը փոքր են, նրանց գընդակ դիպցնել շատ դժվար է, սակայն լավ մարզված լավ հրածիգը կարող է դիպցնել: Յեթե գնդակը նույնիսկ չըդիպչի ել ուղղակի տանկի ձեղքին, այլ նրա մոտերքին, նա այնուամենախիվ կարող է վիրավորել՝ և շատ լուրջ կերպով՝ վարորդին կամ գնդացրորդին արճճի ցալքուն: Ներով:





Նկար 23. Վեհկերու տանկի դիտածեղքերն ու յերգիկները



Նկար 24. Դիտակափույրները, դիտածեղի- Տանկային դիմակ պողպա-
քերը և գնդացը համար գնդածե բունը տից

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ տանկերի վարորդների վնասվածքների մոտ 50% տեղի է եր ունենում այն ցալքուններից, վոր գոյանում ելին ձեղքերի վրա սովորական գնդակներով հրածգություն կատարելուց: Բայց վորպեսզի սովորական գընդակներով կատարած հրածգությունը մեծագույն ոգուտ տա, հրածիգը կամ գնդացը նշանառուն պարտավոր ե ճիշտ իմանալ հակառակորդի տանկերի դիտածեղքերի զասավորությունը, վորովհետև մարտում «աչքով» դրանց գտնելը, այն ել տանկի ընթանալու ժամանակ, շատ դժվար է:

Խոշոր հարվածելիության համելու համար, տանկերի վրա հրածգությունը պետք է կատարել գրահանիար գնդակներով հրացաններով ձեռքի կամ հաստոցավոր գնդացրով, հակառանկային հրացաններով ու գնդացիրներով: Այդ գնդակը ծակում է տանկային զրահը, բայց պետք է աշխատել դիպցնել տանկի ամենակենսական մասերին, որինակ՝ մատորին, կամ այն տեղերին, վորտեղ գտնվում է տանկի սպասարկությունը (նկար 25):




— ՏԱՅԿԻ ՄԱՍԵՐԸ, ՎՈՐ ԽՈՅԵԼԻ ՅԵՆ ԶՐԱՎԱԿԱՐ ԳՆԴԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ-
ՄԱՎԵՐ, ՎՈՐ ԽՈՅԵԼԻ ՅԵՆ ՄԻԱՅՆ ՀԱԿԱՑԱԿՎՅԵՆ 13.մ. ՀԵՐԱ-
ՑԱՆՆԵՐԻ և ԳՆԴԱՅԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ:
— ՊԵՐԵԿ ԱԿԱՆՎԱՆԵՏԻ ՀԱՄԱՐ ԽՈՅԵԼԻ ՄԱՎԵՐ,

Նկար 25. Տանկի խոցելի մասերը

Տանկի գրանի ամենահաս շերտը քամասումն է, կող-
երի գրանի ավելի բարակ է յեվ ել ավելի բարակ է
գրանի վերեվում: Այդ պատճառով ել զրահահար գնդակ-
ներով ոգտակար ե կրակ վարել տանկի կողքերի և
վերեկի մասի վրա: Տանկի վերեվի մասին կարելի յե-
կրակել ինտերիուրներից, ծառերից, տներից, ջաղացներից
յեվ ուրիշ բարձր առարկաներից, Պորոնց վրա հրաձգին
նսեցնել հակատանկային հրացանը կամ զնդացիրը ձեռ-
ֆին: Տանկերի դեմ զրահահար գնդակների ամենագործուն-
կրակը գնդացրալին կրակն է: Մեր կանոնադիրքը ճշշտ
մատնանշում է, վոր մեկ տանկի դեմ կարող են հաջող
կոփվ միել յերեք զնդացիր:

Զրահահար գնդակների բավականին շատ տիպարներ
կան: Տեղեկություն կա, վոր Գերմանիայում հնարել են
ալսպես կոչված ուլտրագնդակ (գերգնդակ), վորը 1600
— 1700 մ վայրկ. սկզբնական արագություն ունի: Այդ-
պիսի գնդակն ընդունակ է ծակել 12 մմ-ոց զրահը
50 մ հեռակայությունից: Գնդակն արձակվում է հատուկ
հրացանով, նա զրահահար չե, և նրա հսկայական ծակող
ուժը հիմնված է չափազանց մեծ սկզբնական արագու-
թյան վրա: Ֆրանսիական Գոչկիս գնդացրի (նկար 26)
գնդակը 300 մ հեռակայությունից ծակում է նորա-
գույն տանկի 25 մմ-ոց զրահը, տանկ, վորի զրահի վո-
րակը շատ բարձր է: «Բրեդ» գնդացրի գնդակը 100 մ
հեռակայությունից ծակում է ժամանակակից տանկի
29 մմ-ոց զրահը: Կարմիր բանակի զրահահար գնդակները
և հակատանկային հրացաններն ու գնդացրներն իրենց
վորակով և ծակող ուժով, իհարկե, չեն զիջի ոտարեր-
կրլա տիպարներին:



Նկար 26. Ֆրանսիական «Գոչկի» գնդացերը 13,2 մմ տրամաչափի, ռանդիվերալ դաշտային հաստոցի վրա, վերերև նշանների վրա հրաձգության համար դրությամբ:

ՆՌՆԱԿԻ ՏԱՆԿԻ ԹՐԹՈՒՐԻ ՏԱԿ ՆԵՏԵԼ

Յեթե տանկը կանգնեցնել չի հաջողվել վոչ սովորական, վոչ ել զրահահար գնդակներով, նրա դեմ պետք է գործել ձեռքի նոնակներով, նրանց միացնելով, 3—5 հատ մի կապոց կազմելով։

Նոնակների այդպիսի կապոց պատրաստելու տանիքի բրուրի տակ նետել պետք է կարողանայ յուրաքանչյուր մարտիկ։ 1914 թ. տիպարի նոնակի 3—5 հատից բաղկացած փունջը պինդ կապում են թոկով կամ մետաղալարով այնպես, վոր նոնակները կարելի լինի դարձնել միայն մեծ ուժով։ Բոլոր նոնակները, բացի մեկից, կապում են կոթերը դեպի մի կողմը, իսկ մեկը դնում են կոթը դեպի մյուս կողմը։ Այդ նոնակի կոթից բռնած մարտիկը պահում է վողջ կապոցը, նախքան անկի թրթուրի տակ այն նետվելը։ Նա պայթում է առաջինը և պայթեցնում է մյուս նոնակները։

Յեթե տանկի վրա նետելու համար Միլտի սիստեմի նոնակներն են նշանակված, այդ նոնակները պինդ կապում են տոպլրակի մեջ այնպես, վոր մեկ նոնակի պարիճը դուրս ցցված լինի։

Ամենից լավ է նոնակների կապոցը նետել կանգնած

կամ ծնկից կրակելու խրամատից, նշան բռնելով տանկի թրթուրի տակ։ Լավ մարզված մարտիկը կարող է այդպիսի կապոցը նետել 13—15 մ հեռավորությամբ։ Այդ տեղի կունենա տանկի ընթացքի 3—4 վայրկանի ընթացքում, յեթե նա շարժվում է մեկ ժամում 15 կմ արագությամբ։ 1914 թ. նոնակը պայթում է 4 վայրկանից հետո։ Ուրեմն նոնակը տանկի թրթուրի տակ պետք է նետել այն ժամանակ, յերբ տանկը մարտիկից գտնվում է մոտավորապես 25—30 մետրի վրա։

Պառկած հրաձգության համար խրամատից նոնակը կարելի է նետել միմիայն ծնկի վրա բարձրացած կամ կանգնած։ Տանկը հարկավոր հեռակացնելության վրա մոտ թողնելուց հետո, մարտիկը պետք է արագ վոտքի կանգնի կամ մի ծնկի վրա բարձրանա, նոնակների կապոցը նետի տանկի վրա, աշխատելով դիպցնել թրթուրի տակին, նրա շարժման ճանապարհին, և նույն մոմենտին ինքը պետք է ընկնի խրամատի մեջ։ Այդ բոլորը պետք է տեսվի և վայրկանից վոչ ավելի։ Նոնակները թրթուրի տակ ամենից լավ է կողքից նետել։

Նոնակներ նետելու համար ջոկի հրամատարը սովորաբար յերկու մարտիկ է նշանակում, լուրաքանչյուրին նըռնակների կապոց (տոպլրակ) տալով։ Ջոկերի մնացած մարտիկները պետք է պատրաստ լինեն կրակ բանալու տանկի սպասարկու խմբի վրա, վորովհետև տանկի փշանալուց հետո նրա խումբը կփորձի թողնել այն ու թագնվել։

Մարտիկները նետում են նոնակների կապոցները մեկը մյուսից անմիջապես հետո, այն հաշվով, վոր յեթե մեկը չդիպչի, ապա մյուսը կդիպչի. յերկու կապոց դիպչելու դեպքում, հարվածումն ել ավելի հուսալի կլինի։

Տանկի թըթուրի տակ նոնակների նետումը մարտիկից պահանջում ե լավ մարզգածություն, քաղաքական-բարոյական բարձր կայունություն, հաստատ կամք, վըճռականություն ու համառություն։ Մարտիկը պետք ե տոգորված լինի հակառակորդի տանկը, ինչ գնով ել վոր լինի, շարքից դուրս բերելու ձգտումով և այն համոզմունքով, վոր այդ կարելի լի անել։

1931թ. ճամբարային շրջանի մանյուլըներն ու ջոկատային ուսուցումները մեզ մի քանի ցայտուն որինակներ են տվել՝ տանկերի դեմ նոնակների ոգնությամբ մարտիկների հաջող կավելու։ 70-րդ հրաձգային գնդի կողմից տակտիկական խնդրի լուծման ժամանակ «հակառակորդը» հարձակման անցավ, ըստ վորում հետևակի գրոհին ոժանդակում ելին տանկերը։ Տանկերն առաջին հերթին լերեվան լեկան լին գնդացըրային վաշտի տեղամասում, գնդացըրային կրակային կետի մոտերքում, վորտեղ, ի միջի ալլոց, գտնվում եր կարմիր բանակային Գորդեյեվը։ Հենց վոր տանկերից մեկը շատ մոտեցավ, ընկեր Գորդեյեվը նրա թըթուրի տակ մի կապոց նոնակ նետեց։ Նետումն այնքան հաջող եր, վոր միջնորդը շարքից դուրս հանեց տանկը։ Ընկեր Գորդեյեվը իր գործողությունների համար պարզ ստացավ։

Դեպքեր են լինում, վոր տանկերի հետ հանդիպելու ժամանակ ավելի բարդ պարագա լի ստեղծվում։

— Յես ուղարկվել ելի Մարիեվկա գյուղը հետախուզելու, — պատմում ե ջոկի հրամատար ընկ. Գրիշկով։ — Ճանապարհը դժվար պիտի լիներ, տեղ-տեղ՝ անտառի միջով։ Մենք դուրս լեկանք ժամը 14-ին և ժամը 16-ին անցանք ճանապարհի մեծ մասը, ըստ վորում հարկ լեզար կարել անցնել անտառը։ Անտառի այն կողմը, նրա

բոլորքից մոտավորապես 1 կմ վրա մենք հանդիպեցինք հակառակորդի էրկու տանկետկայի։ Այդ միանգամայն անակընկալ լեղավ։ Փոքր թփուտը խանգարում եր մեր դիտողությունը, այդ պատճառով ել մենք չելինք կարող նրանց ավելի շուստ նկատել։

— Դեպի կամրջակը, թփուտների մեջ, դաշտավին պրշավով մաշաւարշ, — յես հրաման տվի։

«Հակառակորդը» դեռ չկարողացավ մեզ վրա կրակ բանալ, իբր իմ բոլոր կարմիր բանակայինները մանր խմբակներով ցրվեցին դաշտում։

Խիտ թփերում բոլորը հավաքվեցին։ Յերբ դիտակալները գեկուցում ելին ինձ, վոր տանկետկաների լետետեկում արդեն վոչինչ չի լերսում, յես նրամատրին արագործեն գեկուցագիր գրեցի յեվ ուղարկեցի այն ընկ կուգսինի ձեռնով վորի ձին ամենաղիմացկունն ու ամենաարագն եր։

Դրանից հետո յես հրամայեցի լերկու կապոց նոնակ պատ բաստել, իսկ ավագ ձիապանին՝ ձիերը հեռու տանել անտառի մեջ։ Միաժամանակ յես ձիապանի հետ պայմանավորվեցի ազգանշանի մասին, վորի համեմատ նա պետք ե անհապաղ ձիերը բերեր։

Յերբ թփերում մենք նոնակներ ելինք կապում, մեր մոտով մեկը մյուսի լետեկից արագ անցան տանկետկաները։ Հենց վոր նրանք անհետացան անտառում, յես հրամայեցի չորս մարտիկներին արագ խնդիր կամրջի յերես, լերկուսին՝ դուրս գալ անտառի բոլորքը դեպի «Հակառակորդի» կողմը և դիտողություն կատարել, մնացածներին՝ քողարկվել գետակի ափին, իսկ մեկին՝ նոնակների կապոցները ձեռքին, ճանապարհի մոտ, նրանցից մի քիչ հեռու պառկել։

Յերկար սպասելու մեղ համար հարկ չեղավ։ «Հակառակորդ»-ի մեքենաները հանդիպեցին մեր պահպանությանը և սկսեցին յետ գնալ։ Բայց հենց վոր առաջին տանկետկան կանգ առավ քանդած կամրջակի մոտ, ճանապարհի մոտ պառկած ընկ. Սաելովը նոնակների կապոցը նետեց յետեվի տանկի վրա։ Առջևի տանկետկան գնդացիրներով կրակ բաց արեց թփերի վրա, բայց մարտիկները լավ քողարկված ելին և լավ բնական ծածկաբան ունելին։

Մի քանի րոպե մարտից հետո, ընկ. Ռատկոին հաջողվեց նետել նոնակների իր կապոցը։ Յերկու տանկետկաներնել միջնորդի կողմից շարքից դուրս բերվեցին։

ԿԱԽՈՎԿԱՅԻ ՄՍՐԾԸ

1920 թ. Դնեպրի վրա տեղի ունեցած մարտերի ժամանակ մի գեպք ե լեզեր, լերը մի մարտիկ՝ 458-րդ գնդի 3-րդ վաշտի 30կի հրամատար ընկ. Իսայեվը՝ Կախովկայի մոտ շարքից դուրս ե բերել սպիտակ զվարդիականների տանկը։ Այդ գեպքի մասին պատմում են այսպես։

Գիշերն արդեն լուսանալու մոտ եր, բայց մարտիկները գեռ մտադրություն չունելին ննջելու, — սպասում ելին հակառակորդին, վորը միայն մութն ընկնելուց հետո դադարեցրեց գրոհները։ Ականջները սրեցին։

— Սպասեք, տղեք, կամաց.. մի տեղ զողանջում եք չենց միանդամից խրամատներում բոլորը քարացան։ Հարլուրավոր աչքեր հառեցին նախալուսաբացի մթության։

— Դղոգում ե... մեքենա յե գալիս..

— Աստեղ, — սահմանեց ընկ. Իսայեվը և նույն բոլելին ել նախազգուշացրեց՝

— Դեհ, տղերք, չվախենալ.. գործը չփչացնեք։

Պողպատի զրնգոցն ու մոտորի ձայնն ավելի պարզ լսելի դարձան, և ահա վերջապես աջ կողմի ձորակից դանդաղ, կրիայի նման, դուրս սողաց տանկը։

Մեր հրետանին կրակ բաց արավ։ Մի քանի վայրկյանից հետո տանկի մոտ սև այուներ բարձրացան։ Տանկը դանդաղ, ինչպես զորահանդեսում, շարունակում եր շարժումը դեպի մեր լարափակոցները։ Խրամատներում, չնայած աղնուկին ու դղրդոցին, շշուկով ելին խոսում, կարծես, վախենում ելին խրամատները մոտեցող գազանին։ Շշուկով ել կարգադրություն արին։

— Տանկի վրա հրացաններով կրակ բաց չանել, նըռնակները պատրաստել, նետել հրամանով...

— Գնդացիրները պատրաստել կրակ բանալու հակառակորդի կենդանի նշանների վրա։

